



28. ԽՂՃՈՎ ՏՂԵՆ

Ժուկով-ժամանակով մեկուճար տղե մե կէղնի, կարգվելու վախտ օր գիկա՝ խորոտ աղջիկ մե կը բերին հարս: Խորոտ օր կը-սիմ՝ շա՛տ խորոտ կէղնի, հմա շատ անզգամ, սարսի բնութք կունե-նա, լեզուն վրեն չը կանի, չըմեն հեղ զկեսրեր կը թքե ու նալըթե, հըմա՛լ քուֆր կիտա, օր մարդ զանկջներ կը փակե: Կեսրերի օր չուհո՛ւ կը սենա, եբ աչքերուց կը զրկվի, չը կոնա բան-գործի ժաժ գա, ընդրա մանզիլ տնից շուրի բակ կէղնի, ուր աչք լե՛ ճոկան կէղնի:

Օր մե հարս կըսե իրկան.

— Էլ չըմ կոնա պահի՛, տա՛ր քոռուն տեղ մե կորցու, արի:

— Ի՛նչ կըսե, իմ ծնող պապ ի՛մալ կորցում, աստված քըզի սիրտ չը տվե՛ր է:

— Ձըմ գի՛նա, մըջ քար, մըջ էրկաթ՝ պտի տանիս կորցուա, չը տանիս՝ քըզի խաղք ու խայտառակ կէնիմ մըջ ախջըրին:

Տղի սիրտ կը մոմոա, կսկուծ կիտա ջան, հմա շարեն ի՛նչ. գել-նա զհեր կը խաբե, թե էրթան քիչ մե զվոնին. կը տանե ղհալվոր սար, ձեռք շէրթա սպանե, կը մտու մուղարե մե, մուղարեն պա՛զ՝ իմալ յոթ տարվա անվառել թունդիր: Հեր կը հարցու.

— Մենք դո՛ր ինք:

— Էդի հովիվներու կոնն է. դու քիչ մե սարը էրե, ես դուրս չեկ-նամ գամ:

Տղա, դու տղա՛, էն էրթալն է, օր կէրթա: Հեր շատ բաքլա կէնն, կը սրտնեղի, կը տեսնա օր տղեն յանգըցավ, մեկ ձեռքն ի ճոկան, մեկ ձեռքն ի մուղարի պատ՝ գելնա դու, կափլփե, կը նստի վրը քարին:

— Չէ՛, — կըսե, — վո՛ւա, իմ տղին գիլանք կերան, թէ չէ՛ չորի՛ն պտի յանգընեք:

Արեւատոցի վախտ կէղնի՛ մեկ լե մարդոց ձեն ու ջներու հաջ կըլսե: Ո՛ն կէղնի, ո՛ն չէղնի, էրկու հովիվ կը մոտենան ուրին, կը տեսնան մարդն հանդե կուր է, խեղճ-խեղճ կծկի վրը քարին, հմալ ախ ու վախ կը քաշե, օր գիլու սիրտ լե կը փուրթի: Հովիվներուց մեկ կը հարցու.

— Պա՛պե, դու չորի՛ն իս չորա:

— Լա՛ո, ես գինա՛մ, տղեսի ըսեց էրթանք սար քիչ մե զվըռնինք, էկանք հասանք իդա տեղ, ըսեց՝ ես դուա չեղնամ, գամ. չըմ գինա չորի՛ն յանգըցավ, գիլանք կերա՛ն, շար մարդու հանպըտե՛ց, չըմ գինա՛, չկա՛: Քու բախտն իմ չընկի, ձեն տու, բալքի լսե, գա: Հովիվ զձեռ կը դնե յանկըջին, կը բոռա քանիմ՝ հեղ, մինակ ձեն կը դառնա գիկա մերի, մնա:

— Դու անոթի կէղնիս, — կըսե հովիվ, — քըզի հաց ու կաթ բերիմ՝ կի՛:

Հովիվ զհաց կը բրդե մըջ կոտկին, թաժա կաթ կը լցե, փետե գդալ կը դնե մըջ ամենին՝ կիտա հալվորին՝ ուտե:

Հալվոր քանիմ՝ գդալ կուտե, շնոխկալ կէղնի, կըսե.

— Բան էրթա ներսսի, օղորմի ձեր անցավորաց՝ հլա դես-դեն իշկեք, բալքի գտնաք:

Հովիվներ կէրթան, դես-դեն ժուռ գիկան, ձեն կիտան, ճարն ուրանց օր կը կտրի՛ յետ գիկան: Թե տղա դրեր իս՝ արի տար: Չկա՛ ու չկա՛:

— Վո՛ւա, պապե՛, քու տղեն զքըզի խաբեր է՝ բերի չորա, թողի փախեր է:

— Չըմ ա՛վտընա, լա՛ո, տղեն ի՛մալ զհեր կը թալե սար, ըռ-հաթ էրթա տուն: Վոլա, չըմ ա՛վտընա:

Մեծ հովիվ շատ սարբաստ իմաստուն կէղնի, հըտ չեռին կը կռահե, օր իդա բանի մեջ կնկա մատ կա խառվուկ՝ կը հարցու.

— Պա՛պե, բան մե հարցում՝ հմա չընեղենա՛ս, քու հարս ի՛մալ հարս է, թե՛զ է, թե՛ մլայիմ:

— Վոլա՛, քըղնե պահիմ, վերևուց ի՛նչ պահիմ՝ թեզ է քընդ շան աղբ:

— Հա՛, — կըսե հովիվ, էդի քու հարսն է ըսի մարդուն, օր քը-

զի բերն սար՝ սպանն, կորցու, հմա ձեռք չը բռնիր է, թողի փախեր է:

— Ի՛նչ ըսիմ, լա՛ո, քու ըսած կը համոզե զիս: Է՛, թըղ հմալ էղնի, մինակ թե տղես սաղ-սալամաթ տուն հասած էղնի:

Մեծ հովիվ կըսե.

— Մենք քըզի կը պահինք մըջ մեր կոնին, էղի մըզի հեր, մենք լե քու զավկըններ:

Հալվոր թըղ մնա հովիվներու մոտ, մենք դառնանք ինոր տղին: Տղեն է՝ օր զհեր կը խաբե, թողե փախնի՝, կէրթա տուն՝ իմալ-գիժը-ոուկ. բան չէրեա աչքին, հմա՛լ մալուլ, հմա՛լ դարդոտ, օր մ՛ըսի: Անզգամ կնիկ կը հարցու.

— Կորցուցի՞ր:

Տղեն քրպու կը տքա, ձեն չը հանն:

— Քու հե՛տ իմ, ի՛նչ էրիր:

— Սպանի, թողի էկա:

Անզգամ՝ անզգամ, լե գինա՛ք ինչ կըսե.

— Փա՛ռքիմ քու տնեն, աստվա՛ծ, դու վըր հոգուս մեղք-վը-տանգ չը սեպիս, չէ՞ ես պրծա՛ք քոռուն պահելուց:

էդ խոսաց վրեն՝ տղեն կը հռփա դըխ կնիկ, մազերուց կը բռնե ու զարկ, հա՛ զարկ, կը թալե գետին, լանգով էն խղար կը զարկե, տրորե, կէնե գզուկ բուրդ: Տղեն հմա չը սթքի, խիղճն ուրին կուտե, կսկուծ զարկի ջան, նա՛ կոնա քնի, նա՛ բան կուտե, կը զպնի, դառնա թեկ ու դերձան: Ձհեր տուն բերե՝ վա՛յ է, չըբերե՝ վա՛յ է: Խուլասա՛ ժամանակ մե գընցնա, գիշեր մե էրազ կը տեսնա. ուր չառեջ մեծ հայլի է դրուկ, ինք կանուկ չառեջ. կիշկե՛, կիշկե՛, ուրին չը ճանչնա, քիթ ու մուրթ մեծ ու օզոր, գլխուն էրկու կոտոշ է բուսի, բաժն ուրին՝ խոլ, չետեին լե, իմալ սատանին, պոչ կա կպուկ, զայլաբուշտ կէղնի, կը թոնա: Դըռ մութուլու է, գելնա կէրթա սար, տեսնա հերն ի՛նչ էղավ: Կը հասնի սար, կը տեսնա հանդե էրկու հովիվ օխշար ուրանց կը քշին սարնուվի: Կը մոտենա, բարև կիտա, բարև կառնե, կըսե.

— Հովըվներ, իդա տեղրանք հալվոր մե չըք տե՛սերի:

— Ի՛նչ հալվոր,— կըսե մեծ հովիվ:

— Աչքերուց զուրկ, խեղճ հալվոր մե: էնի իմ հերն է, ես հմալ խալթմ՝ իմ էրի, օր մարդ չէրեր է մըջ ախշըրին, էկեր իմ՝ տանիմ:

Տղեն՝ իմալ օր պետքն է՝ կը պատմե ուր գլխու գալած. մեծ հովիվ անկաջն ի կախ՝ կը լսե, պզտիկ հովիվ օր շատ տաքարուն կէղնի՛ կը քաշե զգոպալ օր զարկե տղին, տեղն ու տեղ մեռցու, մեծ հովիվ կըսե.

— Կա՛նի, զարկել-սպանելով բան շէղնի:
 Կը դառնա հալվորու տղին:
 — Ըսինք թե քու հեր սաղ-սալամաթ է ու մեր մոտն է, տանիս, օր էլման էն անզգամն ընդրան տանշե, շարչրկե՛:
 — Զէ՛, հմալ բան էլ շէ՛զնի ու շէ՛ղնի, օր էրեց՝ կսպանիմ:
 — Մատ միամիտ իս, տղա՛, — կըսե մեծ հովիվ, — օր սպանիս՝ քըզի կը քշին սուրդուն, կէրթաս, չըս դառնա: Տանիս տուն՝ անըզգամն էլման էն անզգամն է, ընդրան մինակ մահ-գերեզման կը հաղթե: Քե՛լե էրթանք քու հոր մոտ սա՛նք:
 Հովիվներ չառջևեն, տղեն չետևեն կէրթան, կէրթան, կը հասնին կոնի մե: Տղեն կը տեսնա հանդե հեր նստուկ է քարի մե, հմալ մալուլ, հմալ ամպուկ, օր ըսկի մարդ չը տեսեր է: Տղեն կը մոտենա, քարե կիտա:
 — Յա՛, լա՛ո, դո՛ւ իս, սաղ-սալամաթ իս:
 — Հա՛, ես իմ, ի՛մալ ճանչցար:
 — Քու ձենից, լա՛ո, քու ձենից, արի քըզի պագիմ, կարոտցե՛ր իմ քըզի:
 Հեր ու տղեն կը գրկվին, կը պագին զիրար, մեկ գիլան, մեկ կը ծիծղան: Հովիվներ լե չըն կոնա ուրանց պահի, ընդոք լե գիլան ու կը սնդրտան: Տղեն օր զարտըսուք կը սրբե, հոր կըսե.
 — Դե, չե՛լի, մեռնիմ քու յոտներուն, շնոխկալ էղնինք հովիվ ախպրտոց, էրթանք տուն:
 — Զէ՛, լա՛ո, — կըսե հեր, — իմ մեկ յոտք յոգա, մեկ յոտք գե՛րեզման, չըսօր կամ, վազ՝ չըկամ. գնա՛ քու կնկա հետ ձըզի ըռհաթ ապրեք, մինակ էդի գուզիմ մըջ ախշըրին:
 Տղեն չերկեն-բարակ կը համողե, գրնկնա յոտներ, աղաչանք-պաղատանք կէնե, գիլա, հովիվներ լե մեջ կը խառվին՝ շորկող հալվորուն կը կոտորին, գելնան գիկան տուն: Տղեն ուր շար ու անզգամ կնկան դուա կէնե, նոր ուր խիղճ կըռհաթի:

